# Առավոտ

a r a v o t d a i l y

Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

42/4138/ 7 մարտի 2012 չորեքշաբթի

ISSN 1829-2224
12030
9 771829 222003


## Ա

## Հետընտրական պրոցեսներ

Ռուսաստանում սկսվել է այն, ինչ սովորաբար անվանում են «հետընտրական պրոցեսներ»՝ ընդդիմադիր հայացքներ ունեցող մարդիկ հավաքվում են հրապարակներում եւ իրենց բողոքն են հայտնում ընտրությունների ընթացքի եւ արդյունքների վերաբերյալ. նրանց ձերբակալում են, դատում են եւ այլն: Հետագա զարգացումները կարող են տարբեր լինել՝ կախված նրանից, թե որքանով է իշխանությունը հակված արյուն թափելու, եւ որքանով է ընդդիմությունը արկածախնդիր: Անշուշտ, մարդիկ բողոքելու հիմքեր ունեն՝ ԱՊՀ երկրներում ընտրությունները կազմակերպում ու անց են կացնում իշխանությունները, եւ բնական է, որ նրանք ամեն հնարավորն ու անհնարինը անելու են՝ վերարտադրվելու համար: Ինչո՞ւ ես պետք է կազմակերպեմ մի բան, որում չեմ «հաղթելու»: Եվրոպական երկրներում եւ ԱՄՆ-ում ընտրություններն անց է կացնում պետությունը, եւ դա ոչ մեկի համար «Ավարայր» կամ «Սարդարապատ» չէ՝ սովորական, առօրյա գործընթաց է՝ 4-5 տարով ժամանակավոր վարչակազմ եւ օրենսդիր մարմին ընտրելու համար:

Տվյալ դեպքում, երբ Մոսկվայի հրապարակներ են դուրս գալիս մարդիկ եւ ասում են, որ ընտրությունները կեղծվել են, նրանք ճիշտ են միայն մասամբ: Որովհետեւ ոչ ոք չի կարող ասել, թե իրականում հաղթել է, ասենք, Զյուգանովը կամ Պրոխորովը, իսկ նախագահ է հռչակվել Պուտինը: Ավելի ճշգրիտ կլինի ասել՝ ընտրություններ, որպես այդպիսիք, տեղի չեն ունեցել: Երբ կա երկրի լիարժեք տեր եւ տիրակալ, որը թույլ է տալիս այլ թեկնածուների հավակնել նախագահի պաշտոնին (իսկ ոմանց էլ արգելում է), եւ այդ թեկնածուներն անգիր գիտեն, որ ոչ մի հաջողության չեն հասնելու, եւ քաղաքացիներն էլ շատ լավ հասկանում են, թե ով է ցարը, որը թույլ չի տա, որ որեւէ մեկը մոտենա գահին, այդպիսի միջոցառումը չի կարելի ընտրություն անվանել: Գրող եւ հրապարակախոս Վիկտոր Շենդերովիչը այդ «մրցավազքի» համար ավելի դիպուկ անուն է գտել՝ պարաօլիմպիկ խաղեր, երբ առողջ մարդն իր մրցակիցների ոտուձեռքը նախօրոք կտրել է:

2008-ի հայաստանյան ընտրություններից գլխավոր տարբերությունն այն է, որ հետընտրական գործընթացները կազմակերպում են ոչ թե անցած «ընտրապայքարի» նախկին մասնակիցները, այլ նրանք, ում կոչում են «ոչ համակարգային ընդդիմություն»: Եվ այս տարբերակն ավելի աշխատող է, որովհետեւ Նավալնին, Յաշինը, Ուդալցովը այնքան չեն հոգնեցրել ռուսաստանցիներին, որքան Զյուգանովն ու Ժիրինովսկին: Մեզանում զուտ քաղաքական ասպարեզում թարմ դեմքեր առայժմ չեն երեւում՝ ասպարեզում հիմնականում նրանք են, ովքեր այսպես թե այնպես քաղաքականության մեջ են արդեն մոտ 20 տարի:

Իսկ նմանությունն այն է, որ (եկեք իրատես լինենք) փոփոխություններ Հայաստանում եւ Ռուսաստանում հնարավոր են միայն «վերեւից»: Բայց դրանք կիրականացվեն միայն այն դեպքում, եթե «ներքեւից» լինի ուժեղ ճնշում:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## ՀԱԿ-ում տեղի ունեցածը սպասելի՞ էր



Հայ ազգային կոնգրեսին մաս կազմող քաղաքական չորս ուժեր երեկ հայտարարեցին Կոնգրեսի նախընտրական դաշինքի համամասնական ցուցակում ընդգրկվելուց եւ առաջիկա խորհրդարանական ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու որոշման մասին: Խորհրդարանական ընդդիմությունը ներկայացնող «Ժառանգություն» կուսակցության ներկայացուցիչ Ստեփան Սաֆարյանն Aravot.am-ի հետ զրույցում ասաց, թե այն, ինչ տեղի է ունենում Կոնգրեսում, իր համար սպասելի էր. «Տվյալ պարագայում, իհարկե, ՀԱԿ-ի համամասնական ցուցակը կազմելու բարդությունները կարող են տարբեր անձնական հավակնությունների պատճառ լինել: Բայց առաջին հերթին այս ժայթքման առիթ եմ համարում նախկինում տարբեր հարցերում ՀԱԿ-ի մարտավարական եւ ռազմավարական որոշումների վերաբերյալ ներքին դժգոհությունները, որոնք այն ժամանակ Կոնգրեսի շրջանակներից դուրս չէին գալիս»: Ըստ «Ժառանգության» ներկայացուցչի, տեղի ունեցածը խորհրդարանական ընտրություններից առաջ, կթուլացնի ՀԱԿ-ի դիրքերը:

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### Արցախի հարցի մասին խոսել են ՆԱՏՕ-ում

ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսենի հետ հանդիպումից հետո կայացած ճեպազրույցում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հայտարարել է, որ ԼՂ հակամարտության կարգավորման թեմայի շուրջ խոսել են գլխավոր քարտուղարի հետ եւ համամիտ են այն հարցում, որ «հակամարտությունը պետք է կարգավորվի բացառապես խաղաղ միջոցներով եւ բանակցությունների ճանապարհով, ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում»: ՀՀ նախագահը ասել է նաեւ. «Համոզված ենք, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերջնական կարգավորումը հնարավոր է միայն ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հարգման եւ անվտանգության համակողմանի երաշխիքների ապահովման միջոցով»:

Կարդացեք էջ 2:

### ՀԱԿ-ից նեղացած է

«Ես կտրականապես դեմ եմ, եւ որ ինձ դեմ տվեցին, որպեսզի ստորագրեմ, որ մենք՝ Կոնգրեսին անդամակցող քաղաքական ուժերս, պատվիրակում ենք Լեւոն Տեր-Պետրոսյանին՝ կազմելու Կոնգրեսի համամասնական ցուցակը, ես ինձ վիրավորված զգացի: Ոչ թե նրա համար, որ նրան պակաս եմ հարգում, այլ նրա համար, որ մենք պետք է միասին որոշենք, էնպես, ինչպես երեքուկես տարի կոնսենսուսով ենք կարողացել որոշումներ ընդունել»,- երեկ հայտարարեց ՀԱԿ քաղխորհրդի արդեն նախկին անդամ Սամվել Հարությունյանը:

Կարդացեք էջD3:

### ԱԺ ընտրությունները 2008-ի ընտրությունների երկրորդ փուլն են

«Առաջիկա ընտրությունները լինելու են ոչ թե գալիք նախագահական ընտրությունների նախերգանքը, այլ նախորդ նախագահական ընտրությունների երկրորդ փուլը, եթե, իհարկե, մենք ինքներս ԵԽԽՎ մոնիտորինգի հանձնաժողովի նման չենք փակում «Մարտի 1»-ի էջը: Եթե Հանրապետականի ցուցակը գլխավորելու է Սերժ Սարգսյանը, իսկ ՀԱԿ-ինը՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը, ապա ստացվում է, որ քառամյա ընդմիջումից հետո շարունակվում է նախագահական ընտրությունների երկրորդ փուլը, քանի որ գլխավոր դերակատարներն ու թիմերը գրեթե չեն փոխվել»,- «Առավոտի» հետ զրույցում ասաց Պահպանողական կուսակցության առաջնորդ Միքայել Հայրապետյանը:

Կարդացեք էջ 3:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Այսօր, ժամը 11-ին, «Հայելի» ակումբի հյուրն է գյուղատնտեսության փոխնախարար Գրիշա Բաղյանը:

### Եղանակ

Երեւան - 5 + 7, Շիրակ - 12 + 1, Կոտայք - 12 + 1, Գեղարքունիք - 12 + 1, Լոռի - 10 + 6, Տավուշ - 5 + 12, Արագածոտն լեռներ - 12 + 1, Արագածոտն նախալեռն. - 7 + 8, Արարատ - 6 + 10, Արմավիր - 6 + 10, Վայոց Ձոր լեռներ - 12 + 1, Վայոց Ձոր նախալեռն. - 6 + 10, Սյունիքի հովիտներ - 5 + 12, Սյունիքի նախալեռներ - 8 + 7, Արցախ - 3 + 7

## Գյումրեցիներին խորհրդարանում ե՞րբ պարզ կլինի

Վերջերս մամուլում տեղեկություններ հրապարակվեցին այն մասին, որ աշխարհի չեմպիոն, ծանրամարտիկ Նազիկ Ավդալյանը զբաղեցնելու է ԲՀԿ համամասնական ցուցակի 6-րդ հորիզոնականը, այսինքն՝ միանշանակ պատգամավոր է դառնալու:

Երեկ Aravot.am-ը ԱԺ պատգամավոր, ԲՀԿ Շիրակի մարզային կառույցի պատասխանատու Մարտուն Գրիգորյանից հետաքրքրվեց, թե ինչպե՞ս է վերաբերվում սպորտսմենուհու՝ պատգամավոր դառնալու փաստին, մի՞թե նա կկարողանա հոգսաշատ Գյումրու խնդիրները արժանավայել բարձրացնել խորհրդարանում, եւ, առհասարակ, ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանը Գյումրիից թեկնածուներ ընտրելիս խորհրդակցո՞ւմ է Մարտուն Գրիգորյանի հետ: «Ճիշտն ասած՝ նման քննարկում չի եղել, եւ այս պահի դրությամբ հստակ, կոնկրետ բան չկա, թե Նազիկ Ավդալյանը համամասնական ցուցակում կա՞, թե՞ չկա: Իսկ ինչ վերաբերում է ընդհանուր ցուցակին, նա երեւի աշխատել է այն սկզբունքով, որ կին ընդգրկվի համամասնական ցուցակում, նաեւ, ինչո՞ւ չէ, եթե էդ մարդը աշխարհի չեմպիոն է, մեզ պարզ ճակատ արած մարդ է, նա նաեւ Ազգային ժողովում կկարողանա ցուցադրել իր ուժերը, ինչի՞ չի կարողանա: Քաղաքում կա թիմ, կան գրասենյակներ, մարզային խորհուրդ, բնականաբար՝ ընդհանուր թիմով, խորհրդով աշխատելու ենք, հետո էլ հարցերը ներկայացնելու ենք կառավարությանը, իսկ թե որ մեկս ո՞ր հարցը կներկայացնենք, ինչի՞ն հետեւողական կլինենք՝ դա տեխնիկական հարց է»,- ասաց ԲՀԿ-ական պատգամավորը:

Ն. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

## Շնորհակալ եմ աջակցության համար

Հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը Հայաստանի զանգվածային լրատվամիջոցների պատասխանատուներին, ովքեր դիմել էին ՀՀ գլխավոր դատախազին իմ խափանման միջոցը փոխելու միջնորդությամբ: Նաեւ այդ հայտարարության շնորհիվ է, որ ես այսօր ազատության մեջ եմ եւ կարող եմ պաշտպանել իմ իրավունքները, արժանապատվությունը, ապացուցել իմ անմեղությունը, դիմակայել մարդկային ստորությանը: Առիթից օգտվելով՝ իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում նաեւ իմ ընկերներին եւ հարյուրավոր մարդկանց, ովքեր այս օրերին աջակցում եւ օգնում էին ինձ եւ իմ ընտանիքին, ովքեր հավատում են իմ սկզբունքներին: Այս ամենը մեծ պատիվ է ինձ համար եւ ապրած տարիների եւ գործունեության բարձրագույն գնահատականը:

ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԻՎԻԼԻԹԱՍ ՀԻՄՆԱԴՐԱՄ THE CIVILITAS FOUNDATION

«Սիվիլիթաս» հիմնադրամը հրավիրում է

«Հարյուր հարց, հարյուր պատասխան»

քննարկումների շարքի հերթական միջոցառմանը:

Այս անսվա հյուրն է
Նախկին դատավոր
Պարգեւ Օհանյանը

Քննարկումը կվարի
«Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր
Արամ Աբրահամյանը

Միջոցառումը տեղի կունենա մարտի 7-ին, ժամը 14:00-ին, «Երեւան» հյուրանոցի «Ռոսինի» սրահում:

Մասնակցությունը միայն նախնական գրանցմամբ՝ 010 500 119:

Տեղերը սահմանափակ են:

# Ադրբեջանը շարունակում է հայերի նկատմամբ ատելության սերմանումը

### ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում հայտարարել է ՀՀ նախագահը




Աշխատանքային այցով Բելգիայում գտնվող ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը երեկ հանդիպում է ունեցել Հյուսիսատլանտյան դաշինքի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսենի հետ: Հանդիպման ավարտին ՀՀ նախագահը եւ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը հանդես են եկել հայտարարությամբ: Ըստ պաշտոնական հաղորդագրության՝ երկու կողմն էլ բարձր են գնահատել Հայաստան-ՆԱՏՕ երկխոսությունը՝ ընդգծելով, որ այդ երկխոսությունը նպաստում է տարածաշրջանային եւ հյուսիսատլանտյան անվտանգության ապահովմանը: Անդերս Ֆոգ Ռասմուսենը իր խոսքում ասել է, որ Հյուսիսատլանտյան դաշինքը մեծ կարեւորություն է տալիս Հայաստանի հետ հարաբերություններին: Նրա խոսքով՝ Հայաստանը եւ ՆԱՏՕ-ն ընդհանուր մոտեցումներ ունեն քաղաքական առաջնայնությունների ու անվտանգության ոլորտում մարտահրավերների բազմաթիվ հարցերում: ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը իր երախտագիտությունն է հայտնել Աֆղանստանում միջազգային խաղաղարար ուժերի գործունեությանը Հայաստանի ունեցած ներդրման համար եւ տեղեկացրել, որ դրանց հետագա վերակառուցման ու անվտանգության ապահովումը Աֆղանստանի ուժերին թողնելու վերաբերյալ որոշումներ են կայացվելու առաջիկայում Չիկագոյում կայանալիք ՆԱՏՕ-ի գագաթաժողովի ընթացքում, որին մասնակցելու հրավեր ունի նաեւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: Հայաստանը որպես խաղաղարար ուժերի մասնակից կողմ՝ մասնակցություն է ունենալու նաեւ այս թեմայով որոշումների կայացմանը: ՀՀ նախագահն էլ իր հերթին կարեւորելով տարածաշրջանային անվտանգությունը՝ ասել է, որ գիտակցելով այս ոլորտում հավաքական ջանքերը՝ Հայաստանը եռապատկել է Աֆղանստանում առաքելություն իրականացնող զորակազմը: Խոսելով երկկողմ համագործակցության մասին՝ նախագահը նշել է, որ համագործակցության անկյունաքարը շարունակում է մնալ Անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը, որի 3-րդ փուլի անելիքները համաձայնեցվել են դեռ նախորդ տարվա նոյեմբերին եւ արդեն իսկ իրականացման փուլում են: Սերժ Սարգսյանը շեշտել է նաեւ, որ համագործակցության շրջանակներում բարեփոխումներ են իրականացվում երկրի պաշտպանության, անվտանգության եւ արտակարգ իրավիճակների ոլորտներում, եւ դրանք իրենց հերթին բաղկացուցիչ մաս են կազմում համակարգային այն փոփոխությունների, որոնք ձեռնարկել եւ իրականացնում են Հայաստանի Հանրապետության իշխանությունները: Էլեկտրոնային կայքերի փոխանցմամբ՝ ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսենի հետ հանդիպումից հետո կայացած ճեպազրույցում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հայտարարել է. «Ադրբեջանը կտրականապես մերժում է վստահության կառուցման ցանկացած առաջարկ՝ ուղղված թե՛ տարածաշրջանային համագործակցության խթանմանը, թե՛ շփման գծում լարվածության թուլացմանը: Ադրբեջանը, ցավոք սրտի, դեմ է դիպուկահարների ետքաշմանը առաջին գծից, դեմ է միջադեպերի հետաքննությանը, ավելին՝ ոչ մի րոպե չեն դադարել պատերազմի սպառնալիքները»:

Նախագահը տեղեկացրել է, որ Ադրբեջանի ղեկավարությունը շարունակում է հայերի նկատմամբ ատելության սերմանումը. «Ադրբեջանի նախագահն ընդամենը մի քանի օր առաջ հայտարարեց, որ ադրբեջանցիների թիվ մեկ թշնամին աշխարհասփյուռ հայությունն է: Այս հանգամանքը պետք է արժանանա միջազգային հանրության գնահատականին»:

«Ազատ դեմոկրատներ» կուսակցության վարչության անդամ Գառնիկ Գեւորգյանին «Առավոտը» խնդրեց մեկնաբանել ՀՀ նախագահի բրյուսելյան այցի որոշ մանրամասներ, հետաքրքրվեցինք՝ արդյոք այս այցերը չե՞ն նշանակում, որ Հայաստանն այս տարածաշրջանում ակտիվ է ոչ միայն Ռուսաստանով, այլեւ ԵՄ անդամ երկրներով եւ եվրոպական կառույցներով: «Ազատ դեմոկրատների» ներկայացուցիչը ի պատասխան մեր հարցերի՝ ասաց. «Ինչ վերաբերում է այցերին եւ հանդիպումներին, մենք միշտ խոսել ենք իրական ինտեգրացիայի խորացման, բոլոր եվրոպական կառույցների հետ ամենաակտիվ համագործակցության եւ, ի վերջո, այդ վեկտորը գերակա վեկտոր դարձնելու անհրաժեշտության մասին: Ես չեմ կարող ասել, թե ինչ նպատակներ են հետապնդում Սերժ Սարգսյանի այդ հանդիպումները, ուղղակի կարող ենք արձանագրել, որ դրանք, ըստ էության, ուշացած քայլեր են, քանի որ այս բոլոր քայլերը Սերժ Սարգսյանը կարող էր անել՝ սկսած 2008-ի ապրիլ ամսից, եթե չլինեին բոլոր հետընտրական իրադարձությունները, այնուամենայնիվ, եթե այս քայլերի մեջ, այսօր կատարվող այցերի եւ հանդիպումների մեջ կա բովանդակություն եւ ոչ թե քարոզչություն կամ այլ ենթատեքստ, դրանք, թեկուզ եւ ուշացած, սակայն կարեւոր քայլեր կարելի է գնահատել»: Ի պատասխան մեր հարցին՝ ԵՄ անդամ երկրների եւ եվրոպական կառույցների ղեկավարների հետ մեր երկրի ղեկավարի ակտիվ շփումները արդյոք չե՞ն առաջացնի խանդի որոշ էլեմենտներ մեր ռազմավարական դաշնակից Ռուսաստանի մոտ, Գառնիկ Գեւորգյանն ասաց. «Թերեւս կառաջացնի, բայց երեւի այդ հնարավոր խանդը հաշվի առնելով է, որ նույն Սերժ Սարգսյանը Բրյուսել մեկնելուց առաջ, առավոտյան, դեռ ՌԴ նախագահական ընտրությունների միայն նախնական արդյունքների հրապարակումից հետո, անմիջապես շնորհավորեց Պուտինին: Գուցե կլինեն խանդի էլեմենտներ, բայց եթե կատարվող քայլերի մեջ իսկապես կա կամք՝ Հայաստանը գոնե ավելի պակաս կախված դարձնելու Ռուսաստանից, ապա չեմ կարծում, որ այդ խանդը պետք է մեզ խոչընդոտի»:

Մեր զրուցակցին խնդրեցինք նաեւ հայտնել իր տեսակետը, թե ինչով է պայմանավորված ԵՄ անդամ երկրների ընդգծված ուշադրությունը Հայաստանի եւ Հայաստանում սպասվող ընտրությունների նկատմամբ: Գառնիկ Գեւորգյանի կարծիքով՝ այդ ուշադրությունը միշտ էլ եղել է, եւ երեւի դրանում տեղ ունի այն դերակատարությունը, որը վերապահված է տարածաշրջանում Հայաստանին. «Ես կարծում եմ՝ այդ ուշադրությունը Հայաստանի համար միայն եւ բացառապես դրական է, եթե հերթական անգամ այդ ուշադրությունը բավարելու համար փորձեն իսկապես իրական քայլեր կատարել եւ ոչ թե իմիտացիա անել, որովհետեւ այն չափանիշները, որ դրված են այդ ուշադրության հիմքում, առաջին հերթին անհրաժեշտ են Հայաստանի Հանրապետությանը եւ հետո միայն ԵՄ-ին կամ որեւէ այլ կառույցի»:

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՍԱՅԱՆ

# Ո՞վ է իսկական տղամարդ

«Լսի, էէէէ, ընգեր ջան, էդ ինչի՞ վրա ես ուրախանում, ես քեզ ասեմ, որ ականջիդ օղ անես՝ ես Հայաստան փող բերող տղա եմ, Հայաստանից փող տանող չեմ: Ալամ աշխարհն էլ մանրադիտակով չէ, աստղադիտակով էլ որ նայի իմ վրա՝ կեղտ չի կարա գտնի, իսկ ով որ քաղաքականությունը կեղտ ա համարում, ինքը դրա մեջ պոռստո կեղտ ա». սա ՀՀԿ պատգամավոր Վարդան Այվազյանի խոսքերն են՝ ուղղված իր գործընկերոջը՝ «Ժառանգության» պատգամավոր Արմեն Մարտիրոսյանին: Երեկվա բանավեճի ժամանակ պարոն Այվազյանը ուղղակի կամ անուղղակի «արա, էէէ» «Ազգային ժողովում գլուխ հաշվելու համար չեք», «մի՛ մտի էնտեղ, որտեղից չես դուրս գալու», «ուզում ես պորտից ներքեւ խփե՞ս» եւ այլ արտահայտություններով վիրավորում էր պարոն Մարտիրոսյանին: Բանը հասավ նրան, որ երբ խոսք գնաց հանքերի բիզնեսի մասին, եւ Վարդան Այվազյանը նշեց, որ Հայաստանում սեփական հանք ոչ մեկը չունի, Արմեն Մարտիրոսյանը չէր հասցրել հակափաստարկ բերել, որ «ուղղակի կոնցեսիոն կառավարման» են վերցրել՝ Այվազյանը նետեց՝ «ուղղակի եթե հանկարծ որեւէ մեկի ռիսկն էլ հերիք կանի, բացի իրա մամայի փեշի տակից գոռալու, գա մի հատ մտնի էս գործի մեջ, այ, կասեմ՝ նա տղամարդ է: Հիմա գալի՞ս ես հետս մտնես էդ գործի մեջ, հը՞»:



Aravot.am-ի հետ զրույցում պարոն Մարտիրոսյանից փորձեցինք ճշտել՝ չի՞ վիրավորվել Վարդան Այվազյանի նման խոսքերից, ինչին նա պատասխանեց՝ «Նորմալ է, որ բուռն արձագանքում է»: Ըստ Արմեն Մարտիրոսյանի՝ «ականջիդ օղ արա», «արա, է՜» տարբերակներն ընդունելի չեն. «Բայց կարծում եմ՝ ինքը տեմպի տակ դա ասաց, որովհետեւ մինչեւ այժմ ինքը իրեն շատ կոռեկտ է պահել»: Մամայի փեշի տակ մտնելու արտահայտությունը պարոն Մարտիրոսյանն իրեն չի վերագրել. «Որովհետեւ ցանկություն էլ չկա, ոչ էլ մրցակցություն, որ որեւէ մեկը կարողանա նմանատիպ մեղադրանք առաջադրել: Տղամարդկության հետ դա կապ չունի: Տղամարդն այն չէ, երբ դու կարողանում ես պաշտոնեական դիրքդ չարաշահելով՝ ունենաս ինչ-ինչ բաներ: Տղամարդկությունն այն է, երբ դու քո սեփական քրտինքով կարողանաս վաստակել: Այ, դա է տղամարդկությունը»:

Վարդան Այվազյանի բուռն արձագանքները պարոն Մարտիրոսյանը բացատրեց նրանով, որ ինքը Այվազյանի թույլ, ցավոտ կետերին է կպել, դրա համար էլ նման կերպ է արձագանքել:

ՀՌԻՓՍԻՄԵ ՋԵԲԵՋՅԱՆ

Առավոտ aravot daily
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 07.03.2012

# Առաջիկա ընտրությունները «Հրազդան 2» են լինելու

## Ասում է Պահպանողական կուսակցության նախագահ Միքայել Հայրապետյանը

- Նոր խորհրդարանի ընտրությունների մեկնարկն արդեն տրված է: Ի՞նչ պաշարով է Հայաստանը մտնում նախընտրական փուլ:

- Մեր երկիրն առաջիկա համապետական ընտրություններին գնում է բավականին թուլացած վիճակում, որովհետեւ նախ՝ ներսում քաղաքական դաշտը բավականին քաոսային վիճակում է, երկրորդ՝ մեր շուրջը եռացող կաթսա է՝ Իրանի, Ռուսաստանի դեպքերը, Մերձավոր Արեւելքում զարգացող իրադարձություններն են բավականին վտանգավոր, եւ այդ մարտահրավերներին դիմակայելը պետք է լինի առաջիկա խորհրդարանի ձեւավորման փիլիսոփայությունը:

- Ի՞նչ փիլիսոփայության մասին է խոսքը:

- Կարծում եմ՝ քաղաքական որեւէ ուժի ներկայացնելիք համամասնական ցուցակը նախընտրական ծրագիր է, որից կախված է նաեւ, թե ԱԺ մտնող ուժերը կկարողանա՞ն առաջիկա մարտահրավերներին դիմակայել, թե՞ ոչ: Դա վերաբերում է թե՛ առանձին կուսակցություններին ու դաշինքներին, թե՛ կուսակցությունների եւ դաշինքների ցուցակներում ընդգրկված անձանց: Եթե այդ ցուցակներում մարտահրավերներին ադեկվատ ուժեր են լինելու՝ հրաշալի է, եթե ոչ՝ մեզ շատ լուրջ փորձություններ են սպասվելու: Դատելով իր դաջվածքներից՝ Սերժ Սարգսյանի համար բավականին բարդ է լինելու գլուխ հանել այս վիճակից, ուր մնաց թե՝ օրենսդիր մարմինը կարողանա օգնել նրան, եթե կրկին բաղկացած լինի այսօրվա «համբալի», «հայվանի», «պորտից ներքեւ գոյատեւողի», ցուցարար գիտաշխատողներին եւ երիտասարդությանը եռամատնյա կոմբինացիա ցույց տվողի անդաստաններում մանկապիղծներից: Եթե այդպիսիք են գնալու՝ մարտահրավերներին, բնականաբար, չենք դիմակայի:

- Ըստ այդմ, որո՞նք են ԱԺ մտնող ուժերի Ձեր չափորոշիչները:

- Խորհրդարանում չպետք է լինեն քաղաքական մտածողություն չունեցողները, իսկ զբաղմունքը բացարձակապես կապ չունի: Այսօրվա համար ինքս մի քանի չափորոշիչ եմ տեսնում, որոնք կենսական են, սակայն դա չի նշանակում, որ վաղը դրանք եւս ադեկվատ կլինեն: Այսօր դրանցից առաջինը մեր տարածաշրջանին եւ երկրին սպասվող մարտահրավերներն են, որոնց համահունչ գործող անձինք են անհրաժեշտ խորհրդարանում: Դա առաջին հերթին նշանակում է, որ նրանցից պահանջվող գլխավոր որակը պետք է լինի խորհրդային վասալությունը չտեսած կամ վատ հիշող, անկախության համը ռունգներում ունեցող 30-40 տարեկան կրթված քաղաքացին: Վաղն այս կրիտերիան պետք չի լինի, քանի որ մարտահրավերները փոխված կլինեն. հաջորդ խորհրդարանում գուցե պետք լինեն եվրոպական համալսարաններից ելած նոր մշակութակիրները: Եվս մեկ որակ, որ անհրաժեշտ է հենց այսօր ունենալ կամ նախագծել. դա անհուսության եւ հոռետեսության անդունդը գլորվող մեր հասարակությանն իրենց անբասիր քաղաքական կենսագրությամբ հուսադրող վառ անհատականությունների որակն է, այլապես արտագաղթի լրջագույն մարտահրավերին դիմակայելն անհնար է, ցավոք սրտի. մարդիկ հեռանում են ոչ այնքան նյութական վիճակի, որքան անփոփոխ ճահճից ելնելու հույս չտեսնելու պատճառով:

- Այն, որ նոր ԱԺ-ում պիտի կրթված եւ երիտասարդ, ոչ սովետական եւ հին մտածողությամբ մարդիկ լինեն՝ դեռ մի քանի տարի առաջ ՀՀ-ում ԱՄՆ փոխդեսպան Փենինգթոնի հետ զրույցում ասել էր Սերժ Սարգսյանի փեսան՝ Միքայել Մինասյանը: Ձեզ կբավարարի՞, եթե, օրինակ, ՀՀԿ-ի համամասնական ցուցակն այդ չափորոշիչներով ձեւավորված լինի:



- Անձամբ ինձ՝ ոչ, որովհետեւ դա կարող է խաբկանք լինել: Այսօր «համբալների», «պորտից ներքեւի» մասին խոսողները, որքան գիտեմ, «կրթություն» ունեցող մարդիկ են: Սերժի փեսան անգիր արած բան է ասել: Կամ՝ ո՞վ է ասում, թե ԱԺ-ում օլիգարխներ չպետք է լինեն: Եթե օլիգարխը քաղաքական մտածողություն ունի՝ պիտի խորհրդարանում լինի, եթե չունի՝ չպետք է լինի: Խոսում են ծերերին երիտասարդներով փոխարինելու մասին: Այդ բաժանումը հերթական դավադրությունն է մեր պետականության դեմ: Մի Գալուստ Սահակյանին չի կարելի փոխել հանրապետական այն ջահելների հետ, որոնցից մեկը մեր լեզվի դեմ ամենախայտառակ բանը կատարեց: Եթե երբեւէ Հայաստանում օրինավոր իշխանություն լինի՝ պետք է այդ սափրագլուխ նախարարին պարզապես դատել: Թող հազար Գալուստ Սահակյան լինի, բայց դրանցից մեկը չլինի: Այսինքն՝ տարիքը չէ էականը, այլ քաղաքական մտածողությունը: Սա է կարեւոր չափանիշը:

- Ձեր գլխավորած կուսակցությունը ներկայացնում է ՀԱԿ-ը: Արդյոք այնտեղ համամասնական ցուցակը կազմվո՞ւմ է Ձեր թվարկած չափանիշներին համապատասխան:

- Նախընտրական ցուցակն այն կազմողի դեմքն է: Այն ցուցակները, որոնք մենք կտեսնենք առաջիկայում, պետք է ընկալել ոչ միայն որպես նախընտրական ծրագիր, այլ այդ ցուցակները կազմողների հավատո հանգանակ: Եթե Աստված իր ստեղծագործությունը՝ Մարդուն, ստեղծեց իր պատկերով ու նմանությամբ, ապա ցուցակներ կազմողները եւս իրենց պատկերով ու նմանությամբ են դրանք ստեղծելու: Փառք Աստծո, բոլորն էլ գիտեն, որ ըստ մեր ներկա մշակույթի՝ ամեն ցուցակ մեկ մարդ՝ մեկ պատասխանատու է կազմելու: Հիշո՞ւմ եք, մի քանի ամիս առաջ Սերժ Սարգսյանի եւ Ռոբերտ Քոչարյանի խոսնակները կրակահերթեր փոխանակեցին ներկա խորհրդարանի կազմի հեղինակ լինելու մասին: Առաջինն ցույց կտա, թե ով էր ներկա այլանդակության գլխավոր հեղինակը, թե որ մեկն էր իր պատկերով ու նմանությամբ ստեղծել մեր այսօրվա ունեցածը: Մանավանդ 2008թ. մարտի 1-ից հետո երեւաց, որ ամենաանաղարտ դեմքը Րաֆֆի Հովհաննիսյանինն էր, քանի որ այնտեղ էր տիկին Զարուհի Փոստանջյանը, որի ճիչը՝ «ո՞ւր եք տանում երեխային», այսօր էլ իմ ականջներում է, նաեւ՝ սեփական մարմնով մարդ փրկած Արմեն Մարտիրոսյանը: Տա Աստված, որ սեփական դեմքի մասին այս անգամ մտածեն բոլորը՝ Սերժ Սարգսյանից ու Ռոբերտ Քոչարյանից սկսած մինչեւ Դաշնակցություն ու ՀԱԿ, մանավանդ որ այս անգամ «ամենաանհաջող կադրի» կամ «ժողովրդի վզին փաթաթած փորձանքի» մասին ոչ մի ապաշխարանք արդարացում չի դառնալու այլեւս: Ի վերջո, մենք պիտի հասկանանք՝ պտղով են ճանաչում ծառը:

- Առաջիկա ընտրությունները շատերը համարում են 2013-ին կայանալիք նախագահական ընտրությունների նախերգանք: Դուք է՞լ եք այդպես կարծում:

- Առաջիկա ընտրությունները լինելու են ոչ թե գալիք նախագահական ընտրությունների նախերգանքը, այլ նախորդ նախագահական ընտրությունների երկրորդ փուլը, եթե, իհարկե, մենք ինքներս ԵԽԽՎ մոնիտորինգի հանձնաժողովի նման չենք փակում «Մարտի 1»-ի էջը: Եթե Հանրապետականի ցուցակը գլխավորելու է Սերժ Սարգսյանը, իսկ ՀԱԿ-ինը՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը, ապա ստացվում է, որ քառամյա ընդմիջումից հետո շարունակվում է նախագահական ընտրությունների երկրորդ փուլը, քանի որ գլխավոր դերակատարներն ու թիմերը գրեթե չեն փոխվել: Պարզապես երրորդ տեղը բռնած այն ժամանակվա «կառուցողական ընդդիմադիր» Արթուր Բաղդասարյանի գործառույթն իր վրա կվերցնի «կառուցողական ընդդիմադիր» «Բարգավաճ Հայաստանը», կլինեն նաեւ այլ ուղեկիցներ, ինչպիսիք կային 2008-ին, իսկ թաղային խուժանը կկրկնի իր ծառայությունը գործողին՝ մեծամասնական կոչված զգեստավորմամբ: Նույնիսկ տարին չի փոխվել, դարձյալ նահանջ տարի է: Սա հիմնադիր նախագահի պարտիան է, եւ նա իրավունք ունի տրամաբանական հանգրվանի հասցնել: Այլ կերպ մտածողները կարող են սկսել սեփական պարտիան, որն այս պահին անել խորհուրդ չէի տա:

- Առաջիկա ընտրությունները շատ թե քիչ ժողովրդավարական չափանիշներին կհամապատասխանե՞ն, առավել եւս, որ իշխանություններն են դա խոստանում, նաեւ, որ դրանք լինելու են միջազգային հանրության ուշադրության կենտրոնում, թե՞ էլի արդյունքում «դեժա վյու» կլինի:

- Կոսմետիկայի առումով՝ սրանք շահեկանորեն տարբերվելու են նախորդ համապետական ընտրություններից, բայց շատ չեն տարբերվելու, օրինակ՝ 2007թ. ԱԺ ընտրություններից: Երկրորդ. բացարձակապես ոչ մի վստահություն չունեմ, որ Արեւմուտքի կողմից այս ընտրությունների նկատմամբ սեւեռված ուշադրություն է լինելու՝ նույնիսկ «Մարտի 1»-ի գործոնը հաշվի առնելով: Եթե դա նրանց հետաքրքրեր, Ֆրանսիայի դեսպանատունը գոնե մի լուսանկար կհրապարակեր, թե իր պատերի տակ 2008-ի մարտի 1-ին ինչ տեղի ունեցավ: Այսինքն՝ այստեղ մենք գործ ունենք ռեալ-պոլիտիկի հետ: Արդար ընտրություններ չեն լինելու, որեւէ բանով ավելի լավ ընտրություն չի լինելու, որքան էլ «մատյան գրքեր» լինեն տեղամասերում եւ փորձեն վերահսկել: Բացարձակապես: Բայց Սերժ Սարգսյանը, վստահ եմ, նախագահական ընտրությունների նախօրեին ամեն ինչ անելու է, որպեսզի ե՛ւ Արեւմուտքում իր «գալոչկան» դնի, ե՛ւ Ռուսաստանի համար չընկալվի որպես ավելորդ գլխացավանք, եւ Ռուսաստանը հանկարծ չփորձի իր այդ ներկայացուցչին հաջորդ տարի մեկ այլ ներկայացուցչով փոխարինել: Այո, Սերժ Սարգսյանը փորձելու է ամեն ինչ անել, որպեսզի արտաքին շղարը տեղը լինի:

- Այսինքն՝ «Հրազդան 2» է լինելու:

- Շատ լավ նկատեցիք: Այո, տիպիկ «Հրազդան 2» է լինելու: Իսկ Հրազդանում բացարձակապես վատ չէր մեզ համար, որովհետեւ Սասուն Միքայելյանը բավականին ձայն էր հավաքել: Եթե այդ արդարությունը հնարավոր լինի ամբողջ հանրապետությունով մեկ պահպանել, ապա Հայաստանը բավականին շահեկան վիճակում կհայտնվի:

Հարցազրույցը վարեց

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ

Հ. Գ. Հարցազրույցն ամբողջությամբ կարդացեք Aravot.am կայքում:

# «Հավատացեք, միայն սկզբունքի հարց է»

«Վերջին ամիսների բուռն քննարկումների արդյունքում ՀԱԿ անդամ 18 ուժերից 13-ն արդեն համաձայնության էին եկել, բայց ստիպված եմ հայտարարել, որ ՀՀՇ-ի եւ նրան աջակցող 2-3 ուժերի կողմից վիժեցվեց կոնսենսուսի հասնելու բացարձակ մեծամասնության ձգտումը»,- երեկ «Ուրբաթ» ակումբում հայտարարեց «Հայ կամավորականների համախմբում» նախաձեռնության համակարգող Սամվել Հարությունյանը:

Հիշեցնենք, որ ՀԱԿ անդամ 4 կուսակցություններ՝ պաշտպանության նախկին նախարար Վաղարշակ Հարությունյանի ղեկավարած «Ազգային վերածնունդը», Գառնիկ Մարգարյանի ղեկավարած «Հայրենիք ու պատիվ» կուսակցությունը, Սոս Գիմիշյանի ղեկավարած «Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդը» եւ Ժիրայր Սեֆիլյանի ղեկավարած «Հայ կամավորների համախմբում» միավորումը հրաժարվել են ընդգրկվել Կոնգրեսի նախընտրական դաշինքում: Համամասնական ցուցակի սկզբունքների հետ կապված՝ 13 ուժերը եկել էին համաձայնության, որ առաջին 3 տասնյակի յուրաքանչյուր տասնյակում 7 հոգի պետք է ներկայացնեն ՀԱԿ-ին անդամակցող քաղաքական ուժերը եւ երեք հոգի այլ արժանավորներ՝ քաղբանտարկյալ, մտավորական, երիտասարդ եւ այլն. «Բայց սկզբում ՀՀՇ ներկայացուցիչը ներկայացրեց 6 կուսակցականներ եւ 4 անկուսակցական արժանավորների, իսկ դրանից երկու օր հետո ասացին, որ փոխել են իրենց մոտեցումը եւ գտնում են, որ ճիշտը 5/5-ն է»,- մանրամասնեց բանախոսը:

ՀԱԿ-ի նախընտրական դաշինքում չընդգրկվելը պարոն Հարությունյանը բացատրում է Հայ ազգային կոնգրեսի հետ ունեցած նաեւ ռազմավարական եւ մարտավարական լուրջ տարաձայնություններով: Բանախոսը պնդում է, որ ՀԱԿ քաղխորհրդում ներկայացված իրենց առաջարկները հիմնականում անտեսվել են: Նա համոզված է, որ ավելի կտրուկ եւ արմատական ռազմավարության պարագայում ՀԱԿ-ն արդեն կյանքի կոչած կլիներ 2008-ին ընդունված հռչակագրի հինգ կետերը, որոնց թվում՝ նաեւ իշխանափոխությունը:

Aravot.am-ը պարոն Հարությունյանից հետաքրքրվեց՝ այսինքն՝ ՀԱԿ-ի մաս կազմող 13 կուսակցությունները համաձա՞յն էին անել ամեն ինչ, որ մայիսի 6-ին կայանալիք խորհրդարանական ընտրությունները վերածվեն արտահերթ նախագահական ընտրությունների, բայց ՀՀՇ-ն, ՀԼԿ-ն, ՍԴՀԿ-ն եւ «Այլընտրանք» նախաձեռնությունը դե՞մ էին, նրանք ցանկանում են մանդատներ ստանալ եւ գնալ խորհրդարա՞ն: Սամվել Հարությունյանը հստակեցրեց. «13 կուսակցությունները, որպես հիմք, ընդունել էին «Բռունցքներն են փրկությունը Հայաստանի» վերնագրով կոչը: Այո, իմ եւ քաղխորհրդի անդամ մի շարք ընկերների կարծիքով՝ ժողովրդի մեջ կուտակված ցասման առավելագույն գեներացման դեպքում հնարավոր է մայիսի 6-ին անել արտահերթ նախագահական եւ հերթական խորհրդարանական ընտրություններ»: Ինչ վերաբերում է մանդատ ստանալուն՝ «Նրանց հարցրեք: Համենայնդեպս, մեր առաջարկը չեն ընդունել եւ գնում են հերթական խորհրդարանական ընտրությունների՝ այն, ինչպես վերջին հանրահավաքում ասվեց, համարելով նախագահական ընտրությունների առաջին փուլ: Մոտավորապես այդ բանը նաեւ Սերժ Սարգսյանն է համարում: Նույն բանը նա է ասում, ինչն ինձ համար անընդունելի է»:

Ինչպե՞ս ստացվեց, որ մեկ ամիս առաջ՝ հունվարի 30-ին, ՀԱԿ-ը հայտարարություն տարածեց այն մասին, որ 18 կուսակցությունների դաշինքով գնում են խորհրդարանական ընտրությունների, եւ ՀԱԿ-ի մաս կազմող բոլոր 18 կուսակցությունները համամիտ էին, իսկ հիմա, երբ խնդիրը հանգեց ցուցակին՝ անհամաձայնություններ առաջ եկան: Արդյոք խնդիրը հենց ցուցակում ցանկալի տեղը զբաղեցնե՞լը չէ: Լրագրողների նմանօրինակ հարցերին Սամվել Հարությունյանը պատասխանեց. «Լրագրողներն ինձ ճանաչում են: Սրանից հինգ տարի առաջ 37-րդ ընտրատարածքում ես մրցում էի Սերժ եւ Սաշիկ Սարգսյանների հետ: Դուք գիտեք՝ ինչպիսի պայքար էր, ինչպես է ինձ հաջողվել ժողովրդին ոտքի հանել, եւ 76 ընտրատեղամասերից ընդամենը 25-ում են կարողացել պահել եւ արձանագրել ռեկորդային թիվ՝ 13.606 ձայն: Բոլորը գիտեն, որ այդ մրցապայքարում ես 80 տոկոսից ավելի ձայն եմ ունեցել՝ 21 հազարից ավելի: Չորս անգամ առաջադրվել եմ մեծամասնականով: Ոչ միայն ինքս, այլեւ մյուս ընկերները՝ Վաղարշակ Հարությունյանը, Գառնիկ Մարգարյանը, Սոս Գիմիշյանը, նախանձախնդրություն հանդես չեն բերել անգամ իրենց անունն այդ ցուցակում տեսնելու: Հավատացեք, որ այստեղ միայն կազմավորման սկզբունքի հարց է»:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# «Արմավիան» օդանավակայանին է մեղադրում, «Զվարթնոցն» էլ՝ «Արմավիային»

## Եթե օդանավակայանը ավիաընկերության առաջարկները չընդունի, «Արմավիան» կրկին գործադուլ կանի

Արդեն որերորդ դեմքն է, որ ազգային ավիափոխադրող «Արմավիա» ընկերության չվերթները տարբեր պատճառաբանություններով հետաձգվում են. կա՛մ «Զվարթնոց» օդանավակայանն է արգելում «Արմավիային» թռիչքներ իրականացնել՝ մինչեւ որ կուտակած պարտքերը չմարի, կա՛մ էլ «Արմավիան» է գործադուլ հայտարարում՝ պահանջելով օդանավակայանի ղեկավարությունից սպասարկման սակագներն իջեցնել:

Երեկ առավոտյան ժամը 6-ից «Արմավիա» ավիաընկերության ուղեւորները ընկերության գործադուլի պատճառով ստիպված են եղել ժամերով սպասել իրենց չվերթին ու այդ ընթացքում մի շարք անհարմարություններ են ունեցել: Ուղեւորների ներկայացմամբ՝ մինչեւ կեսօր ավիաընկերությունը, ինչպես որ պայմանագրով է սահմանված՝ հաց ու ջուր կամ հանգստի սենյակ չի տրամադրել: Որոշ ուղեւորներ էլ, երբ փորձել են իրենց տոմսերը վերադարձնել օդանավակայանում գործող ավիաընկերության տոմսարկղի կետում, չեն կարողացել: Ավիաընկերության ներկայացուցիչները պատճառաբանել են, որ իրենց բյուջեն սպառվել է, եւ որ տոմսերի գումարը գնան մայրաքաղաքի գրասենյակից ստանան: Քանի որ ավիաընկերության ու օդանավակայանի միջեւ պարբերաբար խնդիրներ են առաջանում, ինչի արդյունքում տուժում են ուղեւորները, երեկ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության միջնորդությամբ «Զվարթնոցն» ու «Արմավիան» մեկ ժամից ավելի բանակցություններ են վարել եւ ժամանակավոր «զինադադար» կնքել, որից հետո էլ չվերթները վերականգնվել են:

«Առավոտի» հետ զրույցում «Արմավիայի» մամուլի քարտուղար Նանա Ավետիսովան վստահեցրեց, որ այս համաձայնությունը տեւելու է մինչեւ մարտի 13-ը, եւ եթե «Զվարթնոցը» սպասարկման սակագները չիջեցնի, ապա ավիաընկերությունը կրկին գործադուլ կանի. «Նոյեմբերին 10% բարձրացում եղավ, հետո ամեն ուղեւորի համար 2 եվրոյով գինը բարձրացրին: Դա շատ թանկ է. բոլոր միջազգային ավիաընկերությունները գործադուլ են անում, որովհետեւ կրիզիս է: Իսկ մեզ համար այս շուկայական պայմաններում ավելի բարդ է: Մինչ օրս մենք դիմանում էինք, բայց էլ հնարավոր չէ»: Նանա Ավետիսովայի ներկայացմամբ՝ ճիշտ է, մի փոքր ուշացմամբ, բայց իրենց ուղեւորներին սնունդ տրամադրվել է. «Որոշ ուղեւորներ մոտեցել են դրամարկղին, ետ տվել տոմսերը, բայց գումարն անսահմանափակ չէ, փողը վերջացավ, ուստի ուղեւորների մի մասին էլ ուղարկել էինք քաղաքի մեր կենտրոն, բայց երբ իմացան, որ թռիչքը վերականգնվել է՝ ետ եկան»:

Մեր այն դիտարկմանը, որ օդանավակայանի ղեկավարությունը հայտարարել է՝ «Արմավիան», լինելով ազգային փոխադրող, ի տարբերություն մյուս ավիաընկերությունների՝ օգտվում է ընկերութան կողմից տրամադրված հատուկ սակագներից», «Արմավիայի» մեկ այլ ներկայացուցիչ ասաց. «Մեր այս ակցիան խոսում է հենց նրա մասին, որ մեզ համար առանձնահատուկ սակագներ չկան: Այլ երկրներում օդանավակայանն իր ավիափոխադրողների համար մի սակագին է ունենում, օտարերկրացիների համար՝ այլ: Պետությունն իր ավիաընկերություններին դոտացիա է տալիս: Հիմա «Արմավիայի» դեպքում պետությունը չի տալիս, հետո՝ ծառայությունների համար նույն պայմաններն են, ինչ օտարերկրյա ավիափոխադրողների համար»:

«Արմավիայի» ներկայացուցիչը դժգոհեց, որ դեռ մի բան էլ իրենց անունն է դուրս եկել՝ որպես մենաշնորհային դիրք ունեցող, բայց «ոչ մի մենաշնորհ» էլ իրականում չկա. «Մյուս գերիզոր ավիաընկերությունների հետ «Արմավիան» թռիչքներ է իրականացնում նույն ուղղություններով: Այսինքն՝ թռիչքների մենաշնորհ «Արմավիան» չունի»:

Մեր այն հարցին՝ դուք թռիչքների մենաշնո՞րհ եք ուզում, ընկերությունից ասացին՝ «Ոչ: «Արմավիան» մենաշնորհային դիրք կունենար, եթե որոշ ուղղություններով միայն իրեն արտոնություն տային կամ թույլ չտային, որ ուրիշ ընկերություններ այստեղ մուտք գործեին: Մեր միակ պահանջն այն է, որ վերանայվեն գները»:

«Զվարթնոց»-«Արմավիա» «հակամարտության» արդյունքում տուժում են սպառողները: Այս առնչությամբ «Առավոտը» զրուցեց նաեւ Սպառողների իրավունքների պաշտպան Արմեն Պողոսյանի հետ: Սպառողների պաշտպանն ասաց, որ իրենց կազմակերպություն շատ են դիմում սպառողներ, որոնք եւ դժգոհ են «Արմավիայի» սակագներից, եւ տոմսերը ետ տալու գործընթացից. «Ազգային փոխադրողը պատվավոր կոչում է, ոչ թե մենաշնորհը չարաշահելու առիթ: Սպառողի համար «Արմավիայի» հետ խնդիրները լուծելը միշտ էլ բարդ է եղել: Այդ գործընթացից մարդիկ ուղղակի խելագարվում են: Միայն այն, որ ի տարբերություն այլ ավիաընկերությունների՝ «Արմավիայի» տոմսերի գներն ավելի բարձր են, սպառողներն արդեն դատապարտված են եւ նսեմացված»: Տոմսերի բարձր գներին անդրադառնալով՝ մեզ հետ զրույցում «Արմավիան» մեղքը բարդեց «Զվարթնոցի» վրա. «Որովհետեւ օդանավակայանի սպասարկման գներն են բարձր»:




Երեկ օդանավակայանում ուղեւորները, տեղեկանալով, որ «Արմավիան» գործադուլ է անում, դժգոհել են, որ նման դեպքերում գոնե ընկերությունը իր սպառողներին տեղեկացնի, որպեսզի նման քաշքշուկների մեջ չընկնեն ու չհիասթափվեն: Ուղեւորների այս դժգոհությունը փոխանցեցինք նաեւ ավիաընկերության մամուլի քարտուղարին, որն ասաց. «Մենք միայն առավոտյան այդ մասին որոշում կայացրեցինք, եթե նախապես պլանավորած լինեինք, ապա կզգուշացնեինք: Մենք ոչ թե գործադուլ ենք արել, այլ բոյկոտել ենք «Զվարթնոցի» քաղաքականության դեմ, բայց բոյկոտն էլ հենց այն է, որ նախապես չի պլանավորվում ու հայտարարվում դրա մասին»:

Ինչ վերաբերում է երեկ տարածած «Զվարթնոցի» այն հայտարարությանը, թե «Ռոսնավիգացիա» կազմակերպության կողմից ստացվել է հեռագիր, ըստ որի՝ կուտակված պարտքերի պատճառով «Արմավիային» արգելվում է թռիչքներ իրականացնել դեպի Ռուսաստան եւ մուտք գործել Ռուսաստանի օդային տարածք, «Արմավիայից» այսպես պատասխանեցին. «Իսկ հենց «Ռոսնավիգացիայից» դուք նման բան ստացե՞լ եք: Օդանավակայանն ինչ ուզում՝ հայտարարում է: Հենց մենք ակցիան արեցինք, իրենք էլ դա հայտարարեցին: Պարզ է, որ պիտի հայտարարեր, իրենց դեմ ակցիա է եղել, հո չի՞ ասելու՝ հա, ես մեղավոր եմ»: Իսկ «Արմավիային» սնանկացնելու փորձերի մասին վարկածի առնչությամբ էլ ընկերության մամուլի քարտուղարն ասաց. «Նման բան չկա: Եթե հարցը լինի սնանկացման, մենք կհայտարարենք սնանկացում: Մեր խնդիրը օդանավակայանի հետ է, մենք դժգոհում ենք իրենց պայմաններից»:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

# «ԱրմենՏելը» 4 անգամ նվազեցնում է կորպորատիվ ինտերնետի գները

«ԱրմենՏել» ընկերությունը հայտարարում է իրավաբանական անձանց համար «Կորպորատիվ ինտերնետ» ծառայության սակագների եականն նվազեցման մասին: Միջինում բաժանորդային վճարը նվազել է 4 անգամ:

Մասնավորապես, 1 Մբ/վ թողունակությամբ երաշխավորված սիմետրիկ կապուղու տրամադրման ամսական վճարը կկազմի 34800 դրամ, 2 Մբ/վ՝ 62400 դրամ, իսկ 3 Մբ/վ՝ 90000 դրամ:

«Ինտերնետ օգտագործողների կորպորատիվ հատվածը մշտապես գտնվում է «ԱրմենՏել» ընկերության ուշադրության կենտրոնում: Մեր բաժանորդների թվի աճը, ինչպես նաեւ տվյալների փոխանցման շուկայի արագընթաց զարգացումը թույլ են տալիս նվազեցնել սակագները եւ առաջարկել մեր հաճախորդներին գրավիչ գներ: Նոր առաջարկի շնորհիվ մեր կորպորատիվ հաճախորդները, այդ թվում փոքր եւ միջին ձեռնարկությունները, պետական եւ գիտական կազմակերպությունները կկարողանան էապես ընդլայնել իրենց հնարավորությունները՝ ինտերնետին միանալիս»,- նշեց «ԱրմենՏել» ընկերության գլխավոր տնօրեն Իգոր Կլիմկոն:

«Կորպորատիվ ինտերնետ» ծառայությունը կորպորատիվ բաժանորդներին գերարագ ինտերնետի կապուղիների տրամադրումն է: Ինտերնետ ցանցին մուտքն ապահովվում է ընկերության ենթակառուցվածքով, MPLS ցանցի միջոցով՝ Հայաստանի տարածքում CDN հանգույցների առկայության վայրերում: Հաճախորդը ստանում է մուտք ինտերնետ ցանց առանց տրաֆիկի սահմանափակման, երաշխավորված, սիմետրիկ (up/down) արագությամբ (contetion ratio 1/1):

«Կորպորատիվ ինտերնետ» ծառայության մանրամասները կարելի է ստանալ www.beeline.am կայքում:

## Ֆիքսված ցանցին միանալու վարձը կարելի է վճարել տարաժամկետ պայմանով

«ԱրմենՏել» ընկերությունը հայտարարում է ֆիքսված հեռախոսակապին միանալու նոր հնարավորության մասին: Մինչեւ 2012թ. դեկտեմբերի 31-ը Beeline ֆիքսված հեռախոսագիծ տեղադրել ցանկացող ֆիզիկական անձինք կարող են միացման վարձը վճարել 6 կամ 12 ամսվա ընթացքում:

«Միանալով Beeline ֆիքսված հեռախոսագծին մեր հաճախորդները ստանում են կապի զարգացած ժամանակակից ենթակառուցվածքից օգտվելու հնարավորություն: «ԱրմենՏել» ընկերությունը ձգտում է դարձնել ծառայություններն առավել հարմարավետ, մեր հերթական առաջարկը հաշվի է առնում հաճախորդների պահանջներն ու ցանկությունը եւ միտված է քաղաքային հեռախոսակապի ու լայնաշերտ Ինտերնետ-հասանելիության ծառայություններն ավելի մատչելի դարձնելուն»,- ասաց «ԱրմենՏել» ՓԲԸ գլխավոր տնօրեն Իգոր Կլիմկոն:

Beeline ֆիքսված հեռախոսային ցանցին միացման վճարը ֆիզիկական անձանց համար կազմում է 12000 դրամ: Փուլային վճարման տարբերակից կարող են օգտվել Երեւանի եւ բոլոր մարզերի բնակիչները:

## Գյումրիում հացը էժանացրել են

Մեկ շաբաթ առաջ Գյումրու հաց արտադրողները, հավաքվելով ու փոխադարձ համաձայնության գալով, մի գիշերվա մեջ 10-20 դրամով թանկացրել էին պաշտոնապես ընչազուրկ ճանաչված այս քաղաքի հացի գները, ինչը հարուցել էր շարքային գյումրեցիների վրդովմունքը: Գյումրեցիները ՀՀ կառավարությանը մեղադրում էին իրենց քաղաքն անտերության մատնելու ու ինքնահոսի թողնելու մեջ, ինչի հետեւանքով տնտեսվարողները ինչ ուզում՝ «սարքում» են շարքային սպառողների գլխին: Զանգվածային դժգոհություններից հետո կառավարության անդամները, հավանաբար զգալով, որ ընտրությունների նախաշեմին գյումրեցիների հետ նման «խաղեր» պետք չէ տալ, հացի փող տերերին հրահանգեցին իջեցնել հացի գները: Երկու օր է՝ Գյումրիում առաջին անհրաժեշտության այս ապրանքատեսակը վաճառվում է նախկին գնով, մնում է միայն հացի քաշն ու որակը վերահսկվի: Վերջերս Գյումրու տեղական թերթերից մեկը, անդրադառնալով այս քաղաքում վաճառվող հացի որակին, նշել էր, որ սպառողը հացի միջից փնջով մազեր էր դուրս բերել:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

## Աջափնյակի մի մասում ջուր չի լինի

«Երեւան Ջուր» ընկերությունը տեղեկացնում է իր հաճախորդներին եւ սպառողներին, որ, վերանորոգման աշխատանքների հետ կապված, ս.թ. մարտի 7-ին, ժամը 10.00-22.00-ը կդադարեցվի Աջափնյակ վարչական շրջանի Գ-1, Գ-3 (Նազարբեկյան) եւ 16-րդ (Նորաշեն) թաղամասերի եւ հարակից տարածքների ջրամատակարարումը:

Ընկերությունը հայցում է սպառողների ներողամտությունը՝ պատճառված անհանգստության համար եւ կանխավ շնորհակալություն հայտնում ըմբռնման համար:

«Երեւան Ջուր» ՓԲԸ

Առավոտ
aravot daily
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 07.03.2012

# Գյումրեցիները գովերգեցին վարչապետին, նա էլ՝ ՀՀԿ-ին

## Տիգրան Սարգսյանը երեկ Գյումրի էր եկել ՀՀԿ-ական վերնախավի հետ

Կառավարության ղեկավարի ունկնդիրները Շիրակի մարզպետարանի ու Գյումրու քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող բոլոր հիմնարկների աշխատակիցներն էին՝ դպրոցի ուսուցիչներ, բժիշկներ, մանկապարտեզների դաստիարակներ, նույնիսկ դայակներ ու պահակներ, որոնց ՀՀԿ-ական անվան տակ համախմբել էին՝ Տիգրան Սարգսյանի երկարաշունչ ելույթը լսելու: Վարչապետն իր այցի նպատակը բացատրեց նրանով, որ եկել է իր կուսակիցների առաջարկները լսելու ու ըստ այդմ՝ ՀՀԿ-ի նախընտրական ծրագիրը գրելու: Սակայն իրականում կառավարության ղեկավարը ներկաներին արդեն իսկ պատրաստի, բավականին ռոմանտիկ նախընտրական ծրագիր ներկայացրեց, այնպիսին, որ թվաց, թե մի քանի ամսից Հայաստանը առնվազն Շվեդիայի հետ է մրցելու:

Տիգրան Սարգսյանը հարմարավետ գյուղի մոդել առաջարկեց՝ հիանալի բարեկարգված ճանապարհներով, ինտերնետ կապով, գյուղացիներին դիզվառելիքի սուբսիդավորում խոստացավ, ժամանակակից ու որակյալ սերմերի մատակարարում, մի խոսքով՝ վստահեցրեց, որ դեմքով շուռ են գալիս դեպի գյուղացին: Պետության անունից նույնիսկ աղքատ ընտանիքների զավակներին բարձրագույն կրթություն խոստացավ: Նա չանտեսեց նաեւ առողջապահությունը՝ խոստանալով այն հասանելի դարձնել բոլորին:

Իսկ որ ամենակարեւորն էր, Տիգրան Սարգսյանը շեշտեց, որ իրենք միշտ ազնիվ են իրենց ընտրողների ու քաղաքացիների հետ. 5 տարի շարունակ, համաձայն իրենց կարգախոսի՝ «Առաջ Հայաստանի», զբաղված են եղել պետության ամրապնդմամբ ու բանակի հզորացմամբ, որը հաջողությամբ իրականացրել են: Սակայն մինչ այսպիսի շռայլ խոստումներ հնչեցնելը՝ վարչապետը խոսեց ՀՀԿ-ականների մեծահոգի, համերաշխ ու հանդուրժող լինելու մասին, ակնարկեց, որ կարող էին միակուսակցական կառավարություն ձեւավորել, բայց ընտրեցին համագործակցությունը՝ շանս տալով նաեւ մյուսներին: Նա իր խոսքը սկսեց այսպիսի ուշագրավ մտքով. «Մենք իշխող կուսակցություն ենք եւ մենք ենք ձեւավորել կառավարությունը, ընդ որում՝ մենք դա կարող էինք անել միայնակ, որովհետեւ բավարար ձայներ Ազգային ժողովում ունեինք, որպեսզի ինքնուրույնաբար ձեւավորեինք կառավարությունը, մենք գնացինք այլ ճանապարհով, որով մեզ առաջնորդում է մեր թիմի քաղաքական ղեկավարը, այն է՝ Հայաստանի Հանրապետությունում ձեւավորել համագործակցության մթնոլորտ,



ապահովել համերաշխությունը: Սա լրջագույն մարտահրավեր էր մեզ համար 2008թ. մարտի 1-ի իրադարձություններից հետո, մենք ունեինք պառակտված հասարակություն, սոցիալական, քաղաքական լարվածություն, եւ մեր առջեւ դրված էր խնդիր՝ կառուցել կամուրջներ ընդդիմության հետ: Այսօր մենք կարող ենք արձանագրել, որ հանրապետության նախագահի գլխավորությամբ մեզ հաջողվել է հաղթահարել այդ կարեւորագույն մարտահրավերը»,- ներկայացրեց վարչապետը:

Այնուհետեւ անդրադարձավ կոալիցիոն գործընկերներին՝ ասելով. «Դուք տեսնում եք՝ ինչ է կատարվում աշխարհում, ինչեր են կատարվում տարբեր երկրներում, եւ շատ հաճախ՝ անպասելի քաղաքական ցնցումներ, սոցիալական ցնցումներ, որոնք բերում են պետությունների փլուզման: Հասկանալի է, որ Հանրապետական կուսակցությունը, գիտակցելով պատմական պատասխանատվությունը, որ ընկած է իր ուսերի վրա՝ ապահովել երկրի կյանքում համերաշխություն եւ համագործակցություն, գնաց այդ ճանապարհով: Մենք ձեւավորեցինք կոալիցիոն կառավարություն եւ համախմբում ենք բոլոր շահագրգիռ կողմերին՝ քաղաքական կուսակցություններին, հասարակական կուսակցություններին, եւ պետք է համատեղ կառուցենք մեր պետության ապագան»:

Այնուհետեւ կառավարության ղեկավարը սկսեց լսել դահլիճում նստածներին: Նրանց խոսք տալն ու կրակն ընկնելը մեկ եղավ: Մանկավարժ, թե գյուղապետ՝ ձայն ձայնի տված, դիֆերամբներ ձոնելով վարչապետին, նրան մեծարգո ու հարգարժան անվանելով՝ ելույթի կեսից բողոքախեղդ էին անում նրան. օրինակ՝ գեղագիտական կենտրոնը ջեռուցում չունի, տնօրենը երկու տարի է՝ նամակ է գրում վարչապետին, սակայն վերջինս բանի տեղ չի դնում, Ախուրիկ գյուղը գազիֆիկացված չէ, Գյումրու փողոցները քարուքանդ են, անցնել չի լինում, եւ այսպես շարունակ: Ամենահետաքրքիրն ու անկեղծը գյումրեցի վարսավիրներից մեկի բողոքն էր. վարչապետին առանց մեծարգո ու հարգարժան անվանելու՝ վարսավիրը միանգամից անցավ բուն թեմային: «Բարով եք եկել մեր քաղաք, թող ձեր ոտքը Գյումրիին խեր բերի, բայց ի՞նչ կլինի, որ միջամտեք ու զսպեք հարկայիններին, թողնեն, որ առանց կանխավճարի աշխատենք, դեռ չաշխատած, եկամուտ չտեսած՝ գալիս փող են տանում՝ 3 ամսվա կանխավճար միանգամից»: Վարչապետը հարցրեց. «Եթե 3 ամիս հետո գան տանելու, բա որ ձեր բիզնեսը փակեք ու չտա՞ք գումարը»: «Ես բիզնես փակողներից չեմ, իմ վարսավիրանոցը ամենահինն է Գյումրիում»,- շարունակեց վարսավիրը: Վարչապետի այն հարցին էլ, թե ինչքա՞ն գումար է կազմում կանխավճարը՝ վարսավիրը հպարտ-հպարտ պատասխանեց. «Ամիսը 145 ռուբլի»: «Գյումրիում դեռ ռուբլո՞վ են առեւտուր անում»,- ծիծաղեց վարչապետը՝ այդպիսի բարձր տրամադրությամբ էլ գյումրեցիներին ցտեսություն ասելով:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

# Բողոքի ցույց՝ Չեխիայում

Մարտի 5-ին Չեխիայում Ադրբեջանի դեսպանատան մոտ տեղի ունեցավ հայ համայնքի բողոքի ցույցը՝ նվիրված Սումգայիթի զոհերի ոգեկոչության տարելիցին: Չեխերեն, ադրբեջաներեն ու անգլերեն պաստառների վրա գրված էր «Սումգայիթը չի մոռացվի», «Ադրբեջանը զանգվածային ջարդ է իրագործել», «Ադրբեջանը իրագործում է հայատյաց քաղաքականություն» եւ այլ կարգախոսներ: Համայնքի անդամները պարզել էին նաեւ Սումգայիթում սպանված 27 հայերի լուսանկարները ու նրանց մահվան վկայականի պատճենները: Նրանց հիշատակի համար տեղում վառվեց 27 մոմ: Բարձրախոսով չեխերեն կարդացվեց հատուկ ուղերձ՝ 1988-ին Սումգայիթում կատարված այդ հրեշավոր իրադարձությունների մասին:

Ադրբեջանի դեսպանատունը վաղօրոք տեղեկացված էր հայկական համայնքի ձեռնարկի մասին եւ «պատրաստված ընդունեց» հայ ցուցարարներին. դեսպանատան պատշգամբից կախված էր Սումգայիթի եւ Խոջալուի միջեւ հավասարության նշան դնող ցուցապաստառ, իսկ պարսպից ներս հավաքվել էին ադրբեջանցի ուսանողներ, որոնք ձեռքերին պահել էին «Խոջալուի ջարդերի» հայտնի կեղծ լուսանկարներն ու ադրբեջաներեն եւ ռուսերեն վանկարկում էին զանազան հակահայ արտահայտություններ:




Դրսում դրված բարձրախոսներից հնչում էր ադրբեջանական բարձր երաժշտություն: Դա հայ ցուցարարների վանկարկումներն ու բարձրախոսից կարդացվող խոսքը խլացնելու ապարդյուն փորձ էր: Ի դեպ, հնչող երգերն էլ հայկական երգեր էին, որոնք հերթական կարգով փորձում են սեփականաշնորհել ադրբեջանցիները: Սակայն դա եւս չօգնեց: Բողոքի ձեռնարկը տեւեց մեկ ժամ եւ ավարտվեց «Արցախը չի վերադառնա Ադրբեջանի կազմ», «Այս երաժշտությունն այլեւս չի հնչելու Արցախում», «Ազատ, անկախ Արցախ» վանկարկումներով:

Չեխիայի տարբեր քաղաքներից հավաքված հայ համայնքի ակտիվիստները հեռացան՝ թույլ չտալով որեւէ անախորժ միջադեպ, ինչը դրվատանքով էին գնահատել ձեռնարկը հսկող չեխ ոստիկանները:

ՇՈՒՇԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ
Պրահա

# Մարզպետի «շինական լուրջ նախազգուշացումները»



Տավուշի մարզկենտրոն Իջեւանով հոսող Աղստեւ գետը դարձել է աղբատար հոսանք: Բազմիցս այդ հարցը քննարկվել է Տավուշի մարզխորհրդի նիստերում, մարզպետը տվել է Աղստեւը մաքուր պահելու հանձնարարականներ, սակայն դրանք արդյունք չեն տվել: Ինչպես տեղեկացնում է Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքը (www.tavush.gov.am)՝ փետրվարի 27-ին մարզպետ Արմեն Ղուլարյանը հերթական աշխատանքային խորհրդակցությունն է անցկացրել մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարների հետ: Քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ Միքայել Ղալումյանը տեղեկատվություն է ներկայացրել քաղաքային համայնքներում իրականացվող աղբահանության աշխատանքների վիճակի մասին: Կայքում նշված է. «Մարզպետը հանձնարարեց մշտական հսկողության տակ պահել ինչպես նշված համայնքների աղբահանության, այնպես էլ մարզկենտրոնով հոսող Աղստեւ գետի մաքրության ապահովման աշխատանքները»: Մարզպետի այս հանձնարարականից մի շաբաթ անց եղա Աղստեւի ափին եւ տեսա, որ գետի աղտոտվածության վիճակն ավելի է վատացել: Իմ լուսանկարելու պահին էլ գետափնյա առեւտրի եւ սպասարկման օբյեկտներից շինարարական եւ այլ աղբ էին թափում Աղստեւ: Գետափնյա սրճարաններից մեկի տերը, իմանալով, որ լրագրող եմ, ասաց, որ 4 օր առաջ Իջեւանի կոմունալ ծառայության աշխատակիցները գետի ափերի մաքրման աշխատանքներ էին կատարում, սակայն օբյեկտներից շարունակում են աղտոտել, եւ մաքրված տեղը նորից աղբավայր է դառնում: Աղստեւի մաքրությունն ապահովելու Տավուշի մարզպետի հանձնարարականները հիշեցնում են շինական «հերթական լուրջ նախազգուշացումը»: 1950-ական թվականների սկզբին ամերիկյան ռազմական ինքնաթիռները ազատ կերպով հետախուզական թռիչքներ էին կատարում կոմունիստական Չինաստանի օդային տարածքում: Չինաստանը հակաօդային պաշտպանության միջոցներ չուներ, եւ այդ երկրի արտգործնախարարությունը ԱՄՆ-ին հղում էր «1418-րդ լուրջ նախազգուշացումը»:

## Ո՞վ կբարեխոսի ՀՀԿ-ի համար

Մայիսի 6-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններում ՀՀԿ-ն Տավուշի մարզի թիվ 40 ընտրատարածքում պաշտպանելու է Միքայել Վարդանյանի, թիվ 41-ում՝ Հակոբ Հակոբյանի թեկնածությունը: Սակայն վերջիններս հազիվ թե կարողանան ՀՀԿ-ի օգտին քարոզչություն կատարել: Միքայել Վարդանյանն անկուսակցական է, իսկ «Երեւանի գարեջուր» ՓԲԸ խորհրդի նախագահ Հակոբ Հակոբյանը վերջերս է ՀՀԿ-ին անդամագրվել: ՀՀԿ Տավուշի մարզային կառույցի ղեկավար, մարզպետ Արմեն Ղուլարյանն էլ աչքի չի ընկնում հռետորի ձիրքով: Համամասնական ընտրակարգով Տավուշի մարզում անհրաժեշտ ձայներ ստանալու համար հանրապետականին մնում են ավանդական միջոցները՝ համայնքապետարանների, կրթական հիմնարկների, բուժհաստատությունների, սոցիալական ծառայությունների միջոցով «բերվող» քվեները:

ՌՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

# «Հնարավորություն ունենայի, ողջ աշխարհը կնվիրեի»

## Ինչ նվիրել սիրելի կանանց՝ տոնի առիթով

1857 թվականի մարտի 8-ին մի խումբ կանայք Նյու Յորքում ցույցի դուրս եկան իրենց իրավունքների համար՝ պահանջելով 10-ժամյա աշխատանքային օր, իսկ 1910-ին՝ նույն օրը, Կոպենհագենում սոցիալիստ կանանց միջազգային կոնֆերանսի ժամանակ Կլարա Ցետկինը հանդես եկավ մարտի 8-ը կանանց միջազգային տոն հռչակելու առաջարկով: 1965-ից մարտի 8-ը ոչ աշխատանքային օր էր ԽՍՀՄ-ի տարածքում՝ գունավոր բացիկներ, համերգներ հեռուստատեսությամբ եւ ռադիոյով, ինչ-ինչ ժեստեր աշխատավոր կանանց: Անկախ Հայաստանի կանայք էլ կարող են հպարտանալ, որ երկու տոն ունեն՝ Մարտի 8 եւ Ապրիլի 7, իսկ ավելի ճիշտ՝ մի ամբողջ միամսյակ: Այլ հարց է, թե նրանց շրջապատող տղամարդիկ ինչ ջանքեր են թափում իրենց կանանց իսկապես տոն պարգեւելու համար



Անվանի դերասան Արմեն Էլբակյանն, օրինակ, «Առավոտի» հետ զրույցում ասաց. «Եթե հնարավորություն ունենայի՝ իմ սիրելի կանանց տոնի առիթով ամբողջ աշխարհը կնվիրեի: Ամեն անգամ նրանց հարցնում եմ՝ ինչ-որ բան նվիրելուց առաջ, որովհետեւ իմ կանանց շատ դժվար է լավ նվերներ անելը, չնայած պահանջկոտ չեն, ուղղակի, ամեն բան չէ, որ հավանում են: Իսկ ծաղիկներ միշտ եմ նվիրում»: Ինչ վերաբերում է մարտի 8-ից ապրիլի 7-ը ընկած միամսյակին, ապա Արմեն Էլբակյանի խոսքով. «Ինձ համար ամբողջ տարին, նույնիսկ ամբողջ կյանքս է միամսյակ»: Արվեստագետը, օգտվելով առիթից, շնորհավորեց բոլոր կանանց:



Ազգային օպերային թատրոնի տնօրեն Կամո Հովհաննիսյանը նշեց, որ զբաղվածության պատճառով դեռ չի որոշել, թե ինչ է նվիրելու տիկնոջն ու դստերը: Այ թոռնուհուն, գիտի՝ ինչով կարելի է ուրախացնել. կգնի նրա սիրելի ֆիլմերի DVD-ները, ամեն տարի այդպես է անում: «Աղջկաս ու կնոջս անպայման ծաղիկներ կնվիրեմ, մեկ էլ երեւի օծանելիք, ինչը ցանկացած կնոջ էլ հաճելի է»,- ասում է պարոն Հովհաննիսյանը: Իսկ միամսյակից չի նեղվում, որովհետեւ գտնում է, որ կանայք ամեն ինչի արժանի են. «Նրանց միամսյակն էլ է քիչ, կլոր տարին պիտի կնոջ համար տոն դառնել»:



Բանաստեղծ եւ թարգմանիչ Վահե Արսենը հայտարարեց, որ այս տարի որեւէ կնոջ նվեր չի անելու: Ասածն էլ հիմնավորեց այսպես. «Քանի որ իմ սիրելի կանայք չափազանց շատ են, իսկ իմ ֆինանսական միջոցները չափազանց քիչ՝ երկրաչափական պրոգրեսիայով նվազում են, որոշել եմ այս տարի ոչ մեկին ոչինչ էլ չնվիրել եւ ի նշան աստվածային սիրո՝ հականյութապաշտական ակտ իրականացնել՝ հիմքում դնելով մարմնական եւ հոգեւոր ահագնացող իմպուլսները, որոնք հոգու եւ մարմնի բուրվառով առաքում եմ իմ սիրելի կանանց»:



Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի տնօրեն Արտակ Պողոսյանն ասում է, որ տիկնոջը նվեր անելիս աշխատում է միօրինակ չլինել, ինչ-ինչ անակնկալներ է մտածում՝ հաշվի առնելով կնոջ նախասիրությունները: «Իմիջիայլոց ոչ մի տարի հատուկ չեմ որոշում՝ ինչ նվիրել: Այդ օրն առավոտյան կարծես ինքնաբերաբար ստացվում է՝ ըստ օրվա զգացումի, տրամադրության, տրամադրվածության… Ամենակարեւորն իմ կարծիքով ոչ թե նվերն է՝ իր ֆիզիկական տեսքով, այլ զգացմունքը, ուշադրությունը եւ նվերը մատուցելու ոճը»,- կարծում է պարոն Պողոսյանը:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

# Աստղադիտարանը շահարկելու թեմա չէ

«Առավոտի» փետրվարի 16-ի համարում տպագրվել է «Ակադեմիական» կրքեր եւ աշխատավարձի խոստումներ» հոդվածը, որը վերաբերում է Բյուրականի աստղադիտարանի տնօրենի վերջերս կայացած ընտրություններին:

Աստղադիտարանի կոլեկտիվի 2/3-ի հավանությանը արժանացած թեկնածուն ես եմ: Դրան հետեւեց Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստը, որով նախկին տնօրենը՝ Հայկ Հարությունյանը, երկու տարով այդ պաշտոնում վերընտրվեց, ինչպես Հայկական աստղագիտական ընկերության համանախագահ, Բյուրականի աստղադիտարանի առաջատար գիտաշխատող Արեգ Միքայելյանն է ասում՝ «որպես միակ հնարավոր տարբերակ»:

Հիմնական թիրախը, որը փորձում են օգտագործել իմ դեմ, դա աշխատավարձերը բարձրացնելու իմ խոստումն է: Իրականում Հարությունյանը քաջատեղյակ է, որ ի տարբերություն Բյուրականի աստղադիտարանի, որն ունի պետական ֆինանսավորում, իմ ղեկավարած հիմնարկը՝ Գառնիի «Գալակտիկա» ՓԲԸ-ն, պետական ֆինանսավորում ընդհանրապես չի ստանում եւ արդեն հինգ տարի է՝ շարունակում է աշխատել միայն հայրենական եւ արտասահմանյան գործընկերներիս՝ իմ նկատմամբ ունեցած վստահության շնորհիվ՝ նրանց պատվերների եւ դրա դիմաց ֆինանսավորման հաշվին: Հայկ Հարությունյանը հոդվածում ասում է, որ ես 10 ամիս աշխատավարձ չեմ վճարել, ինչը իրականությանը չի համապատասխանում: Իմ մասին ստեր տարածելու փոխարեն՝ ավելի լավ է նա պատասխանի Ակադեմիայի բաժանմունքի բյուրոյի նիստում իր հասցեին հնչած մեղադրանքներին, մասնավորապես այն մասին, որ աստղադիտարանին հատկացված դրամաշնորհները եւ VIVACELL-ից ստացված ֆինանսական աջակցությունը փոշիացվել են եւ նպատակին չեն ծառայել: Ինչ վերաբերում է իմ խոստումներին, որոնք ներկայացրել են որպես պոպուլիզմ, աստղադիտարանը վերականգնելու նոր ֆինանսական միջոցներ գտնելու հարցում, ես ունեմ գրավոր հավաստիացումներ, թե ովքեր են պատրաստ ներդրում կատարել աստղադիտարանի ապագայի համար, սակայն այժմ դրանց հրապարակումը տեղին չեմ համարում: Հոդվածում, որպես չեզոք անձ, ներկայացված է Արեգ Միքայելյանը: Ինչպե՞ս կարող է նա լինել չեզոք, երբ Հայկ Հարությունյանի հետ երկուսով նույն հասարակական կազմակերպության համանախագահներն են: Բացի այդ, Ակադեմիայի բաժանմունքի ժողովում նա բացահայտորեն պաշտպանել է Հարությունյանի թեկնածությունը: Իսկ Արեգի այն միտքը, որ ինձ չեն ճանաչում աստղադիտարանում, առնվազն ծիծաղելի է: Այս կապակցությամբ պետք է ասեմ, որ ես իմ մանկությունը եւ ողջ գիտակից կյանքս անցկացրել եմ Բյուրականի հետ սերտ կապի մեջ: Իմ հայրը՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լյուդվիգ Միրզոյանը, իր ամբողջ կյանքը նվիրել է Բյուրականի աստղադիտարանին, 26 տարի եղել է ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անփոխարինելի տեղակալը: Իմ սիրտը ցավում է Բյուրականի աստղադիտարանի համար, իմ հոր հիշատակի համար, մեր հայրենիքի աստղագիտական նվաճումների պահպանման եւ հետագա զարգացման համար:



Լուսանկարը՝ հեղինակի

Արեգ Միքայելյանը նաեւ կարծիք է հայտնել իմ ներկայացրած ծրագրի վերաբերյալ: Սակայն ինչպե՞ս կարող է դա անել, երբ ինքը այդ ծրագրի ներկայացման ժամանակ չի մասնակցել Բյուրականի աստղադիտարանի կոլեկտիվի ժողովին: Վերջապես, որպես գիտական կազմակերպիչ եւ տնօրեն ինքնադրսեւորվելու համար, ցուցադրելու իր կարողությունները եւ կազմակերպչական հմտությունները, Հայկ Հարությունյանը ունեցել է 24 տարի ժամանակ: Սակայն իր պաշտոնի տնօրինության արդյունքում այսօր աստղադիտարանի 5 դիտակներից եւ ոչ մեկը չի աշխատում, աստղադիտարանում բացակայում են գիտական ժողովները, քննարկումները, աշխատակիցները ներկայանում են աշխատանքի շաբաթը մեկ անգամ, նախկինում եղած ակտիվ համագործակցությունները արտասահմանյան գործընկերների հետ անհույս կորսված են, երիտասարդ գիտնականները հուսահատված են, աստղադիտարանի տարածքը՝ երբեմնի կանաչ դրախտը, մատնված է անտերության: Արտասահմանյան գործընկերների մեծ մասը կորցրել է հետաքրքրությունը Բյուրականի աստղադիտարանի նկատմամբ: Գուցե Բյուրականի աստղադիտարանի վերականգնումը, կամ գոնե ժառանգության պահպանումը այսօր այլեւս օրակարգային հարց չէ՞:

ԱՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ

Ֆիզմաթ գիտությունների թեկնածու
Գառնիի «Գալակտիկա» ՓԲԸ տնօրեն

## Շտեմարանի շատ սպասված 4-րդ մասը




Արդեն վաճառքում է հայոց լեզու եւ հայ գրականություն առարկայի 2012թ. պետական ավարտական եւ միասնական քննությունների առաջադրանքների շտեմարանի վերջին՝ 4-րդ մասը: Հիշեցնենք, որ առաջին եւ երկրորդ մասերը 2011-ի դեկտեմբերից էին շրջանառության մեջ դրվել:

Հատորյակի վերջում տեղ են գտել նախորդ շտեմարանների վրիպակները: ԳԹԿ-ից հետաքրքրվեցինք՝ այդ վրիպակները նկատել են թեստերի կազմման վրա չաշխատած «դրսի» մասնագետնե՞րը, որոնք ամեն տարի միասնական քննությունից հետո աղմուկ են բարձրացնում՝ վկայակոչելով թեստերի թերությունները, արդյո՞ք ԳԹԿ-ն նրանցից ստացել է ինչ-ինչ արձագանքներ:

Կառույցից պատասխանեցին, որ վրիպակները նկատել է հենց աշխատանքային խումբը, որը հետեւել է նաեւ այլ մասնագետների եւ ուսուցիչների դիտարկումներին: ԳԹԿ-ից հայտնեցին, որ շնորհակալությամբ կընդունեն ցանկացած նկատված վրիպակի մասին տեղեկություն:

Ա aravot daily
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 07.03.2012

VIVAcell MTS
ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

ՄՇԱԿՈՒՅԹ

# ԱԳԳ-ն կզբաղվի հրատարակչական «գողերով»



Հեղինակային իրավունքների միջազգային օրվանից՝ ապրիլի 23-ից կմեկնարկեն «Երեւանը համաշխարհային գրքի մայրաքաղաք» ծրագրի միջոցառումները:

«Առավոտը» գրքի ոլորտի մարդկանց եւ ընթերցողների շրջանում անցկացրած հարցախույզից ճշտեց նրանց հուզող երեք հիմնական հարցերը. ինչո՞ւ են Հայաստանում աճում հեղինակային իրավունքի խախտումները, ինչո՞ւ հայ գրողները մասսայաբար հասու չեն արտասահմանյան ընթերցողին, ինչո՞ւ հայ գրողը գրեթե չի ստեղծում համաշխարհային գրականությանը մրցունակ արժեքներ: Հարցերի պատասխանները ստանալու ակնկալիքով զրույցի հրավիրեցինք Առաջին գրական գործակալության (ԱԳԳ) տնօրեն Արեւիկ Աշխարոյանին:

ԱԳԳ-ն հիմնվել է 2011թ.՝ հայ հեղինակներին արտերկրում ներկայացնելու նպատակով: Գործակալությունը ներկայացնում է մի քանի գրական ոլորտ՝ արձակ, պոեզիա, մանկական գրականություն եւ ոչ գեղարվեստական գրականություն: Կառույցի հետ համագործակցում են շատ հեղինակներ, այդ թվում՝ Գուրգեն Խանջյանը, Լեւոն Խեչոյանը, Հովհաննես Երանյանը, Արամ Պաչյանը, Հրաչյա Սարիբեկյանը: Գործակալությունը ունի արտերկրում գործող ենթագործակալություններ (Իտալիայում, Սլովենիայում, Լեհաստանում, Հունաստանում, Բրազիլիայում եւ Իրանում):

Արեւիկ Աշխարոյանը հայտնեց, որ իրենց հետազոտությունների արդյունքում եկել են եզրահանգման, որ բարձրարժեք գրականություն ստեղծվում է այն ժամանակ, երբ դրան նախորդել է լուրջ թարգմանչական պրոցես: Մեր զրուցակցի համոզմամբ, թարգմանություններին պետք է մոտենալ զգուշորեն, քանի որ գեղարվեստական արժեքը անհաջող թարգմանության արդյունքում կարող է տուժել:

Արեւիկ Աշխարոյանը սրտնեղեց, թե հայ թարգմանիչների քանակը չի գերազանցում 50-ը, չկան մասնագետներ, որ գրականություն թարգմանեն ֆիններենից, հոլանդերենից, ճապոներենից, խորվաթերենից, չինարենից, կորեերենից:

Անդրադառնալով գրքի ոլորտում առկա այլ խնդիրների, տիկին Աշխարոյանը հայտարարեց. «Օրինակ, 1961 թվականից Սենտ Էքզյուպերիի «Փոքրիկ իշխանը» ունեցել է բազմաթիվ հրատարակություններ՝ հեղինակային իրավունքների ոտնահարմամբ: Միայն 2011 թվականին է հայ հրատարակիչներից մեկի կողմից գնվել հրատարակելու իրավունքը ու ձեռնարկը կյանքի կոչվել: Այլ օրինակներ էլ կան, որ այս կամ այն ստեղծագործությունը չի գնվել պաշտոնապես, այլ ընդամենը թարգմանվել է միջնորդ լեզվից: Ի դեպ, աշխարհում «ավանդույթ» կա, որ երբ որեւէ երկրի հրատարակչական «գողը» մեկ անգամ բռնվում է, նրա հայրենակիցները հետագայում խնդիրներ են ունենում հեղինակային իրավունքներ ձեռք բերելիս. նրանց կամ միանգամից մերժում են, կամ առաջարկում վատ պայմաններ»:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԺԱՄԱՆՑ

# Սկզբից հաշվարկ են անում, հետո՝ սիրահարվում

## Երիտասարդ աղջիկների համար հետաքրքիր է լինել սիրած տղամարդու «փոքրիկ աղջիկը»

Ինչու են երիտասարդ աղջիկները նախընտրում շփվել իրենցից տարիքով մեծ տղամարդկանց հետ, այս հարցն ունի մի քանի պատասխան: Հիմնական պատճառը՝ կայացած տղամարդկանց ձգտելն է: Աղջիկները չեն ուզում դժվարությունների միջով անցնել, իրենց ընտրած տղայի հետ հետագա համատեղ կյանքում խնդիրներ ունենալ. գերադասում են կյանքը կապել կայացած, բոլոր առումներով ամեն ինչի հասած տղամարդու հետ. այս կարծիքին է հոգեբան Լիլիթ Սարգսյանը: «Սերը մի տեսակ երկրորդ պլան է մղվել, հիմա աղջիկները առաջին հերթին ուշադրություն են դարձնում տղայի ֆինանսական վիճակին: Կարելի է ասել՝ սկզբում հաշվարկ են անում, հետո՝ սիրահարվում: Առաջ նման բան չկար: Երիտասարդ աղջիկները նույնիսկ խուսափում էին իրենցից տարիքով մեծ տղամարդկանց հետ ամուսնանալուց, հիմա հակառակն է՝ բոլորը ձգտում են մեծ տղամարդկանց հետ հանդիպել, հստակ գիտակցելով, որ դա իրենց համար ամենահարմար տարբերակն է:

Այժմ երիտասարդ աղջիկներն ավելի կայացած են, քան տղաները. օրինակ՝ բուհն ավարտելուց հետո աղջիկներն ավելի հեշտ են աշխատանք գտնում, քան իրենց տարեկից տղաները: Աղջիկների համար բաց դռներն ավելի շատ են: Բուհն ավարտած, աշխատանքի տեղավորված աղջիկը, հատկապես եթե լավ է վաստակում, երբեք իր համար ամուսին չի ընտրի իր հասակակից տղային»,- «Առավոտի» հետ զրույցում ասում է Լ. Սարգսյանը՝ նշելով, որ այս առումով պետք չէ մեղադրել աղջիկներին, քանի որ եթե հայերը նոր են սկսել այդ կերպ վարվել, ապա արտասահմանցիները միշտ են այդպես եղել:

Կայացած ամուսին, լավ տուն ու տեղ ունենալը լավ է, իսկ առանց զգացմունքների, հաշվարկների վրա հիմնվելով ընտանիք կազմելը՝ նման բրազիլական հեռուստասերիալի: Լ. Սարգսյանը փաստում է՝ կան աղջիկներ, որոնք հաշվարկ անելուց բացի, պարզապես սիրում են իրենցից տարիքով մեծ տղամարդկանց հետ շփվել, ինչը պայմանավորված է մարդու բնույթով. «Այն աղջիկները, որոնց համար իրենց հասակակից տղաներն անհետաքրքիր են կամ նրանց մեջ իրենք դեռ տղամարդու չեն տեսնում՝ պայմանավորված է նաեւ խելացիությամբ: Այսինքն՝ այդ աղջիկներին չի բավարարում փոքրերի հետ շփումը, ընդհանուր քննարկելու, բանավիճելու թեմաներ չեն լինում, համեմատելու բաներ չեն գտնում, այդ պատճառով էլ ձգտում են լինել մեծերի կողքին, մեծերի ընկերակցությամբ, քանի որ մեծերն ավելի փորձառու են հատկապես տղամարդ-կին փոխհարաբերություններում, ընտանիք կազմելու հարցում. երիտասարդ աղջիկների համար միշտ հետաքրքիր է լինել սիրած տղամարդու «փոքրիկ աղջիկը», իսկ տղամարդկանց էլ հաճելի է իրենց «փոքրիկին» երես տալը»:

Մեր զրուցակցի ձեւակերպմամբ՝ հաճախ տղամարդիկ էլ ձգտում են իրենցից տարիքով փոքր աղջիկների հետ ամուսնանալ, մի պարզ պատճառով՝ «ըստ նրանց տրամաբանության՝ տարիքով շատ փոքր կանանց կարող են իրենց ուզած ձեւով դաստիարակել, ինչն, իմ կարծիքով, շատ սխալ է»:

ԵՎԱ ՀԱԿՈԲՅԱՆ

# Հայտարարություն

ZVARTNOTS
"Armenia" International Airports" C.J.S.C.

Երեկ «Արմավիա» ավիաընկերությունը գործադուլ է հայտարարել իր ուղեւորների դեմ, որը անդրադարձել է Երեւան-Մոսկվա, Երեւան-Ռոստով չվերթների վրա: Ըստ «Արմավիայի», այս ակցիան իրականացվել է «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող բարձր սակագների պատճառով:

Վերոնշյալ չվերթների ուշացումը, իրականում, պայմանավորված է «Ռոսնավիգացիային» ունեցած պարտքերով, որի արդյունքում «Արմավիային» արգելվել է չվերթներ իրականացնել Ռուսաստանի որեւէ քաղաք:

«Արմավիան» փորձում է իր ֆինանսական խնդիրները բարդել «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի վրա:

Ըստ միջազգային պրակտիկայի՝ օդանավակայանային վճարները այլ ծախսերի համեմատ (օրինակ՝ անձնակազմ, օդանավերի վառելիքալցավորում եւ այլն) կազմում են չվերթների շահագործման ընդհանուր ծախսի փոքր մասը: Օդանավակայանային վճարների ցանկացած փոփոխություն կարող է լրջորեն ազդել օդանավակայանի ծառայությունների եւ ենթակառուցվածքների վրա, սակայն փոքր ազդեցություն ունենալ ավիատոմսի վերջնական արժեքի վրա:

«Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ն տեղեկացնում է, որ Զվարթնոց միջազգային օդանավակայանում գործող սակագները սահմանվել են 2005 թվականին, միջազգային ստանդարտների համապատասխան՝ հաշվի առնելով օդանավակայանի զարգացման Մաստեր Պլանը: Կիրառվող սակագները նույնն են բոլոր ավիաընկերությունների համար, սակայն «Արմավիան» ի տարբերություն մյուս ավիաընկերությունների, օգտվում է որոշ արտոնություններից, որոնք համաձայնեցվել են ՀՀ կառավարության հետ 2011թ. մարտին:

«Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ն կատարել է ՀՀ կառավարության առաջ Մաստեր Պլանով ստանձնած պարտավորությունները եւ իրականացրել բոլոր ներդրումները: Արդյունքում բոլոր ուղեւորները եւ ավիաընկերությունները կարող են օգտվել ավելի բարձր որակի ծառայություններից, որոնք համապատասխանում են միջազգային ստանդարտներին:

Ցավում ենք, Արմավիայի նման անպատասխանատու ակցիայի արդյունքում ուղեւորներին պատճառված անհարմարությունների համար, որոնք մեր վերահսկողությունից դուրս են:

«Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ